ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratay gestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 34

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.12.2016Թ. ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերը հաստատելու մասին:

2. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին:

3. Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին:

4. Համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման և անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին:

Կողմ - 8 Դեմ - Ձեռնպահ -

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՄՅԱՆ ՍՈՆՅԱ
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ
ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ
ՀԱՍՐԱԹՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 35

ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի

Հաստատել Այգեստան համայնքի տարածքում գտնվող առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի վերստուգիչ մարմնի հետևյալ կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Էդիկ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Յուրիկ Հակոբյան

Պարգև Սարգսյան

Կողմ - 8 Դեմ - Ձեռնպահ -

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՍՅԱՆ ՍՈՆՅԱ
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԵՍ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ
ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ
ՀԱՍՐԱԹՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 36

ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետով

Հաստատել Այգեստան համայնքի Քաղաքաշինական կանոնադրությունը, համաձայն հավելվածի:

Կողմ - 8 Դեմ - Ձեռնպահ -

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՍՅԱՆ ՍՈՆՅԱ
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ
ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ
ՀԱՍՐԱԹՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի
Այգեստան համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 8-ի
N 36-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն քաղաքաշինական կանոնադրությունը հիմք է հանդիսանում հետագայում գոտևորման նախագծի մշակման համար և կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

2. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

3. Համայնքի քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է Այգեստան համայնքի գործող գլխավոր հատակագծի, սույն կանոնադրության, ՀՀ քաղաքաշինության բնագավառի օրենսդրության, գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

ԳԼՈՒԽ II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

4. Համայնքի տարածքում գտնվում են հիմնականում վերջին 200 տարվա ընթացքում կառուցված շենքեր և շինություններ, որոնց մեջ աչքի ընկնող կառույցներում գերիշխող են ավանդական քարի ճարտարապետական ոճը՝ քարե մակերեսների և մանրամասների որակյալ և բարձրարվեստ մշակմամբ, ինչպես նաև հիմնականում վերջին 30 տարիներին կառուցված նորառոճ շենքերը՝ երկաթբետոնե կարկասային կոնստրուկտիվ լուծումներով՝ ժամանակակից բարձրորակ շինարարական նյութերի կիրառմամբ և տեխնիկական հագեցվածությամբ, հաճախ համադրված ավանդականի հետ:

5. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

ԳԼՈՒԽ III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

6. Այգեստան գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. մայիսի 29-ի N628 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, բերված է ստորև.

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Հուշաղբյուր	1965 թ.	գ. մ.	—	3.11/3	S	
Խաչքար	12-13 դդ.		—	3.11/1.1		
Խաչքար	12-13 դդ.		—	3.11/1.2		
Խաչքար	12-13 դդ.		—	3.11/1.3		
Եկեղեցի	19 դ.	Հ. Շիրազի փող.	—	3.11/2	S	ներկայումս հին հիմքերի վրա կառուցվում է նոր եկեղեցի
Գերեզմանոց	19 վրջ - 20 դ. սկզբ	աե մասում	—	3.11/1	S	

7. Հուշարձանները կարող են օգտագործվել գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով, ինչպես նաև իրենց սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ:

8. Համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գոտիների սահմաններում կառուցապատման ցանկացած աշխատանք իրականացնել միայն համապատասխան նախագծերի առկայության դեպքում:

9. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

ԳԼՈՒԽ IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10. Պահպանման ենթակա են 3.1 կետում նշվածները, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող հետևյալ շենքերը և շինությունները.

1) Խմելու ջրի ջրամատակարարման ցանցը, որը հիմնանորոգված է

2) Համայնքի տարածքը ոռոգվում է ջրանցքներով /Ազատ, Արտաշատ/, ոռոգման առուների ցանցը, որը ունի հիմնովին նորացման, ընդլայնման և ամենամյա մաքրման կարիք,

3) Մշակույթի տուն, հարակից տարածք,

4) Մանկապարտեզ:

5) Համայնքի փողոցների ցանցը, որը գրեթե ամբողջությամբ ունի հիմնանորոգման, բարեկարգման և գիշերային լուսավորության կարիք,

6) Այգեստան գյուղի գերեզմանոց

11. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

ԳԼՈՒԽ V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

12. Համայնքի տարածքում խրախուսվում են ինչպես ավանդական, այնպես էլ արդի ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման

առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը՝ պայմանով, որ կատարվեն ճաշակով և մասնագիտական բարձր վարպետությամբ:

13. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

1) շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդա-քանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն),

իրականացնելիս հաշվի առնել քաղաքաշինական ձևավորված կամ նոր ձևավորվող միջավայրին հարազատ մնալու, չխաթարելու, այլ ընդհակառակը, բարելավելու, զարգացնելու անհրաժեշտությունը:

2) հատուկ ուշադրություն դարձնել փողոցի կողմի ցանկապատի և մուտքի գեղարվեստական ձևավորմանը, բարեկարգել փողոցի հարակից հատվածը միասնական ոճով և նյութերով,

3) շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները (,հինգերորդ ճակատե), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն իրականացնել, հաշվի առնելով համայնքի քաղաքաշինական միջավայրի ձևավորման վրա դրանց մեծ ազդեցությունը,

4) խրախուսվում են շենքի ճակատների և փողոցի հարակից մասերի արտաքին լուսավորությունը:

14. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

1) ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները). խրախուսվում են բարձրորակ, հարատև, էկոլոգիապես մաքուր ու անվնաս շին. նյութերը:

2) համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառները ծածկոցով և նստարաններով հագեցնել և ձևավորել գեղարվեստական ճաշակով բարձրորակ շին. նյութերով,

3) հասարակական նշանակության շենքերում և տարածքներում ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),

4) հասարակական, ինչպես նաև մասնավոր տարածքներում խրախուսվում է ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),

15. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

1) ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ,

շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զբուցարաններ և բարեկարգման այլ տարրեր) հանդիսանում են մշտական հոգածության ոլորտներ:

ԳԼՈՒԽ VI. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

16. Քաղաքաշինական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների համար պարտադիր են քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը, որը ապահովում է հուսալիության, շրջակա միջավայրի պահպանության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշեր, ինչպես նաև նախագծման իրականացման ու շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ:

17. Նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/ համայնքում տալիս է համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

18. Շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի հաստատումից հետո, համայնքի ղեկավարի կողմից:

19. Շինարարության թույլտվություն չի պահանջվում շենքերի, շինությունների, ընթացիկ վերանորոգման, շենքերի հարդարման և տարածքների բարեկարգման աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը կամ չեն հակասում սահմանված սերվիտուտներին, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

20. Քանդման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

21. Քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:

22. Ավարտված շինարարության փաստագրումը կատարվում է միմիայն շահագործման ընդունող հանձնաժողովի ակտով: Ավարտված շինարարության շահագործման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

23. Օբյեկտների կառուցումը իրականացվում է ՀՀ քաղաքաշինության օրենքով՝ սահմանված կարգով նախագծերի ձեռքբերման, փորձաքննության անցկացման, շինարարության թույլտվության ստացումով:

ԳԼՈՒԽ VII. ԳՈՎԱԶԴՆԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

27. Բոլոր տեսակի արտաքին գովազդային նյութերի, ցուցափեղկերի, հայտարարությունների, ցուցատախտակների և այլ տեղեկատվական միջոցների տեղադրումը շենքերի, պարիսպների առանձին վահանակների, ստենդների և նման ճարտարապետական կառույցների վրա թույլատրվում է միայն համայնքի ղեկավարի որոշմամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

28. Գովազդները պետք է լինեն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ հավաստի, օրինական, պատշաճ պահպանելով արտաքին գովազդի տեղադրման համար թույլտվության բոլոր պայմանները:

29. Գովազդի տեղաբաշխման նկատմամբ հսկողությունը իրականացնում է համայնքապետարանը:

30. Արգելվում է անբարեխիղճ գովազդի տեղադրումը:

31. Ժամանակավոր տաղավարների տեղադրումը թույլատրվում է ըստ կառավարության կողմից սահմանված կարգի, համայնքի ղեկավարի որոշմամբ, հող.օգտագործման և շինարարության բաժնի մասնագետի ներկայությամբ՝ համաձայն առևտրի և սպասարկման համայնքային կանոնների:

32. Վերը նշված գործողությունների համար գանձվում են համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական վճարներ:

33. Համայնքի ղեկավարը սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը: Համայնքի ավագանու որոշմամբ անվանվում և վերանվանվում են համայնքային նշանակության փողոցները, հրապարակները, զբոսայգիները և այլն:

34. Արգելվում է ինքնուրույն կերպով հանել, տեղադրել և վերատեղադրել փողոցների անվանումների և համարակալման ցուցանակները:

ԳԼՈՒԽ VIII. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

35. Կառուցապատողները պարտավոր են.

1) կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան շինարարության թույլտվության հիման վրա:

2) Ապահովել քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը ՀՀ կառավարության սահմանված կարգով:

3) անհրաժեշտության դեպքում նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների հետ:

36. Շինարարական աշխատանքներ կատարելիս շինհրապարակները պետք է ցանկապատվեն՝ ժամանակավորապես և տեսանելի տեղում փակցվեն համապատասխան ցուցանակներ: Շինարարական աղբն ու հողը պետք է դուրս բերվեն կուտակվելու ընթացքում: Շինարարական կամ վերանորոգման աշխատանքներ կատարելիս ձեռնարկում է միջոցառումներ, որպեսզի չկեղտոտվեն շինհրապարակին հարող տարածքները:

37. Հողային աշխատանքների կատարումը (հրապարակներում, մայթերում, անցումներում, բակերում, սիզամարգերում, այգիներում, պուրակներում և այլ տեղերում) ստորգետնյա ինժեներական ցանցերի կառուցման և վերանորոգման ժամանակ, կապված վերգետնյա կառույցների հետ, թույլատրվում է միայն ըստ համաձայնեցված նախագծերի և համայնքի ղեկավարի թույլատվությամբ:

38. Ճանապարհածածկույթի կամ հողածածկի քանդման հետ կապված վթարային աշխատանքները թույլատրվում են ընդունված վթարային հեռախոսագրի առկայությամբ այն կազմակերպությունների կողմից, որոնք տնօրինում են հաշվեկշռում գտնվող ինժեներական ցանցերը:

39. Ստորգետնյա ինժեներական ցանցերի վթարների վերացումը սկսվում է անմիջապես հեռախոսագրի հաղորդումից հետո, այդ մասին տեղյակ պահելով ավտովերահսկողությանը և կոմունալ սպասարկման ձեռնարկությանը:

40. Վթարային աշխատանքների տեղը պետք է շրջափակվի, կահավորվի ճանապարհային նշաններով և լուսավորվի մութն ընկնելիս: Վթարը վերացնող կազմակերպությունը պարտավոր է նաև անհապաղ (նախնական) վերականգնի քանդված հատվածը հողով՝ շերտային խտացումով և համապատասխան չափի խճանյութով, ինչպես նաև մաքրի ավելորդ հողից և շինարարական մնացորդներից:

41. Վթարից վերականգնված հատվածները հանձնվում են կոմունալ սպասարկման ձեռնարկությանը կամ ճանապարհային հսկողություն իրականացնող ծառայությունների ներկայացուցիչներին ակտով, ճանապարհի ծածկույթը ամբողջովին վերականգնելուց հետո:

42. Կտրականապես արգելվում է ստորգետնյա ինժեներական ցանցերի կառուցման կամ պլանային վերանորոգման աշխատանքների կատարումը վթարային աշխատանքների պատրվակով:

43. Արգելվում է ինքնակամ պեղումների, հորատման, սյուների ու ծողերի տեղադրման, հողածածկույթի մշակման, հրապարակների հողահավասարեցման, փլատակների և քանդման ենթակա կառույցների տակի հողածածկույթների մշակումը առանց ստորգետնյա ինժեներական ցանցերի (էլեկտրականություն, գազ, ջուր և այլն) անջատման:

44. Մագիստրալային փողոցների հատման հիմնական մեթոդը հանդիսանում է, որպես կանոն, փակ՝ ստորգետնյա ձևը, որը լուծվում է նախագծային կազմակերպությունների կողմից, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ընթացքում և համաձայնեցվում ընդունված կարգով:

45. Արգելվում է որևէ տեսակի հողային աշխատանքների կատարումը նոր ճանապարհածածկույթի (ասֆալտի) կատարումից հետո փողոցներում, հրապարակներում:

1) Բացառություններ թույլատրվում են միայն վթարների դեպքում:

46. Շինարարական, վերանորագման աշխատանքների ժամանակ ցանկապատման, երթևեկության կարգավորման, ճանապարհային նշաններով կահավորման և գիշերային լուսավորման պատասխանատվությունը կրում է քաղաքաշինության գործունեության սուբյեկտը: Շինարարական կազմակերպությունը պարտավոր է մագիստրալային և հասարակական տրանսպորտի երթևեկության, փողոցների շարժման ուղղությունների փոփոխության մասին պետավտոտեսչության միջոցով ապահովել բնակիչների անվտանգությունը: Աշխատանքների ավարտից հետո ժամանակավոր կարգավորման նշանները վերացվել են:

47. Փողոցների երթևեկելի մասի մասնակի վերանորոգումների ժամանակ պետք է ապահովվի տրանսպորտի անխափան երթևեկությունը, իսկ միջանցիկ անցման փակելիս ապահովվի հրդեհային պաշտպանության, շտապ օգնության, հատուկ սանիտարական մաքրման, էլեկտրական և գազի ծառայության մեքենաների երթևեկության պայմանները: Անցումների փակման վերաբերյալ տեղյակ է պահվում շտապ օգնության, հակահրդեհային ծառայություններին և պետավտոտեսչությանը:

48. Ժամանակավոր շրջանցումային ճանապարհները, հետիոտնային արահետները, կամուրջները, բակերի և շենքերի մուտքերի մերձեցման ուղիների վերանորոգման աշխատանքները ավարտելիս վերացվում են կառուցապատման աշխատանքներն իրականացնող կազմակերպությունների կողմից:

49. Ճանապարհների լրիվ փակման և երթևեկության դադարեցման որոշումը ընդունում է համայնքի ղեկավարը՝ համաձայնեցնելով պետավտոտեսչության հետ:

50. Երթևեկելի մասի և մայթերի շինարարության վերանորոգման աշխատանքների ժամանակ ստորգետնյա ցանցերի տնօրինողները պարտավոր են իրենց ուժերով, վերանորոգում կատարողների պահանջով, կատարել վերատեղադրող ցանցերի անջատումը: Բարեկարգման նպատակով ստորգետնյա ինժեներական ցանցերի նոր նշումների վերատեղադրումը կատարում են ցանցերը տնօրինողների կողմից, շինարարության կամ վերանորոգումը իրականացնող պատվիրատուի կազմակերպության պատվերով ու նրա միջոցներով: Նախագծից էական շեղումներ

ունեցող ինժեներական ցանցերի տնօրինողները վերատեղադրման աշխատանքները կատարում են իրենք, սեփական միջոցներով:

51. Քաղաքացիների կողմից ինժեներական կառուցումների միացումը, որպես կանոն իրականացվում է բարեկարգման աշխատանքների ժամանակ:

52. Թրթուրավոր տրակտորների և այլ մեքենաների շարժումը վերանորոգված փողոցներով արգելվում է: Նման տրանսպորտի տեղափոխությունը համայնքի տարածքում կազմակերպվում է միջդաշտային ճանապարհներով:

53. Փողոցները, մայթերը, ասֆալտապատված և բարեկարգված այլ տարածությունները ինքնակամ քանդողները անհապաղ դադարեցնում են քանդման աշխատանքները, իրենց միջոցներով վերականգնում քանդված տարածքի նախկին տեսքը և օրենքով սահմանված կարգով կրում պատասխանատվություն:

ԳԼՈՒԽ IX. ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԿԱՆ ՆՈՐՈԳՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

54. Ստորգետնյա ինժեներական ցանցերի հետ առնչվող բոլոր տեսակի շինարարական և վերանորոգման աշխատանքները թույլատրվում են միայն այն նախագծով և սխեմաներով (տեխնիկական պայման), որոնք համաձայնեցված են համայնքապետարանի և ներքոհիշյալ կազմակերպությունների հետ:

1) էլեկտրացանց
2) կապի ձեռնարկություն
3) Գազի շահագործման վարչություն
4) Ճանշին վերանորոգման վարչություն
5) Ջրմուղ-կոյուղու ձեռնարկություն
6) Պետավտոտեսչություն

56. Արգելվում է հաստատված ինժեներական ցանցերի ծրագծերի (տրասա) փոխումը առանց համայնքի ղեկավարի և շահագրգռված կազմակերպությունների հետ համաձայնեցման: Ծրագծերի տարածայնությունների վերաբերյալ վերջնական որոշում է ընդունվում գյուղապետարանի քաղաքաշինության հարցերի հանձնաժողովի կողմից:

57. Համաձայնեցված նախագծերը ուժի մեջ են երկու տարվա ընթացքում: Անկախ դրանից յուրաքանչյուր նախագծով կատարվող ինժեներական ցանցերի տեղակայման վերակառուցման աշխատանքները, որոնք կապված են հողածածկի, ասֆալտի և բարեկարգ այլ տարածությունների հետ աշխատանքները սկսելուց առաջ պետք է ունենալ գյուղապետարանի թույլտվությունը:

58. Առանց համայնքապետարանի հետ համաձայնեցնելու, հողային աշխատանքները կարող են կատարվել սեփական տարածքում կամ օտարման գոտիներում, դրանց ինժեներական կառուցվածքների տնօրինող հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների պատասխանատվությամբ, եթե դրանք չեն պահանջում 51 կետում նշված ծառայությունների համաձայնությունը:

59. Անհատ քաղաքացիներին առանձին վթարների դեպքում թույլատվությունը տրվում է գյուղապետարանի կողմից, 51 կետում նշված կազմակերպությունների համաձայնության և առաջադրած տեխնիկական պայմանի հիման վրա:

60. Թույլտվությունները տրվում են պատվիրատու կազմակերպություններին, անհատ քաղաքացիներին, անմիջապես աշխատանք կատարողներին, որը ուժի մեջ է վերջինների համար նշված տեղամասի, աշխատանքի ձևի, ծավալի և ժամանակաշրջանի նշումների դեպքում:

61. Կարմիր գծերի սահմաններում (փողոցների և թաղամասերի անցումները) ստորգետնյա ինժեներական ցանցերի շինարարության կամ վերանորոգման աշխատանքների կամ վերանորոգման աշխատանքների թույլտվություններն ստանալու համար գյուղապետարանին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

1) Ճանապարհածածկույթի, ինժեներական ցանցերի տեղակայման, վերանորոգման թերությունների ակտ, նշելով ճանապարհածածկույթի և ինժեներական կառույցների առկա վիճակը և վերանորոգման չափերն ու ծավալները:

2) Ծրագրի նախագիծը, համաձայնեցված ճարտարապետական բաժնի և 51 կետում նշված շահագրգռված կազմակերպությունների հետ:

3) Կապալառու կազմակերպության կնիքով համաձայնեցված պլան:

4) Կապալային կազմակերպության հետ պայմանագիր չունեցող կազմակերպությունները բարեկարգման կառույցների վերանորոգման համար պետք է ներկայացնեն երաշխավորագիր-նամակ, ստորագրված պետի և հաշվապահի կողմից:

62. Աշխատանքի կատարման պատվերները նախօրոք քննարկվում են քաղաքաշինության հանձնաժողովի կողմից, և նրա որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որտեղ նշվում են նաև աշխատանքների կատարման ժամկետները:

63. Աշխատանքների կատարման թույլտվությունները տրվում են սահմանված վճարները մուծելուց հետո:

64. Ստորգետնյա և վերգետնյա ինժեներական ցանցերի տեղակայման և վերանորոգման, ինչպես նաև ասֆալտի ծածկի և բարեկարգման այլ էլեմենտների վերականգման աշխատանքները պետք է կատարեն մասնագիտացված կազմակերպությունները:

65. Աշխատանքների կատարման ընթացքում պատասխանատու աշխատողի ներկայությունը պարտադիր է, որն իր հետ պետք է ունենա թույլտվություն և համաձայնեցված բանվորական ու աշխատանքի կատարման նախագծերը:

66. Աշխատանքներն սկսելու նախօրյակին պետք է տեղյակ պահել ինժեներական ցանցեր ունեցող շահագրգռված կազմակերպություններին, ցանցեր ունեցող կազմակերպություններին՝ ցանցերի տեղը համատեղ ճշտելու համար:

67. Աշխատանքների կատարման տարածքում գոյություն ունեցող ստորգետնյա ինժեներական ցանցերի փչացումից ապահովելու պատասխանատուն է այն անձը, որը ղեկավարում է աշխատանքների կատարումը: Նրանք պարտավոր են կատարելու բոլոր տեխնիկական պահանջները և կազմակերպությունների պայմանները:

68. Փողոցում, հրապարակներում և մյուս բարեկարգված տարածություններում ստորգետնյա ինժեներական ցանցերի խրամուղիների փորման և լցման, վերգետնյա կառույցների ժամանակ պետք է ապահովվեն հետևյալ պայմանների կատարումը:

1) Խրամուղու լայնությունները պետք է լինի նվազագույնը, ասֆալտի քանդումը պետք է կատարվի կտրման հատուկ մեքենաներով: Խրամուղիների ու փոսորակների պատերը համաձայն նախագծերի պետք է ամրացվեն, նրանց լցման համար պետք է օգտագործվի մաքուր հող 20սմ-ից ոչ ավելի շերտով, որը պետք է խտացվի համաձայն շինարարական նորմաների:

2) Զրահոսների և հեղուկների հեռացումը խրամուղիներից և փոսորակներից պետք է կատարվի միայն դեպի անձրևատարների մեջ: Արգելվում է դրանց լցնելը երթևեկելի մաս կամ մայթի վրա:

69. Շինարարական, վերակառուցման կամ վերանորոգման աշխատանքների ավարտից հետո պատասխանատու կատարողը պետք է.

1) 24 ժամվա ընթացքում մաքրի վերանորոգումից հետո մնացած շինարարական մնացորդները:

2) Կանչել կոմունալ ծառայության կամ փողոցները, մայթերը տարածությունները տնօրինող կազմակերպություններին, ակտով հանձնել վերանորոգված բարեկարգման կառուցվածքները և ասֆալտածածկույթը:

70. Քանդված մայթերի վերանորոգումը անկախ ծածկույթի ձևերից պետք է կատարվի ամբողջ գոյություն ունեցող լայնությամբ:

71. Փողոցի երթևեկելի մասի ասֆալտաբետոնային ծածկը վերանորոգվում է նախկին վիճակով, մինչև քանդումը կազմված հատուկ ակտի պահանջներից, խճածածկի դեպքում խրամուղու կրկնակի լայնության չափով:

1) Ասֆալտոբետոնյա ծածկույթը լրացվում է մինչև եզրաքարերը, եթե խրամուղու և նրա միջև տարածությունը փոքր է 2մ-ից:

72. Կապալառուն պարտավոր է վերացնել իր աշխատանքի պատճառով առաջացած թերությունները վերանորոգված կառուցվածքների տնօրինող կազմակերպության առաջին իսկ պահանջով՝ մեկ տարվա երաշխավորված ժամկետում:

73. Ավազապատ և հողածածկ ունեցող տարածությունների վերականգնումը կատարվում է քանդման չափով, որը պետք է հաստատվի երկկողմ ակտավորումով, մինչև աշխատանքների սկսելը:

74. Կանաչ տարածությունները վերականգնվում են համաձայն կոմունալ ծառնարկությունների և կանաչապատման ծառայության պայմանների:

75. Վերգետնյա կառույցների (ցանկապատներ, հենասյուներ, ճանապարհային նշաններ և այլն) վերանորոգվում են շինարարության վերանորոգում կատարող կազմակերպությունների կամ անհատների կողմից:

76. Ճանապարհածածկույթի վերանորոգման ժամկետները սահմանվում են՝ ելնելով փողոցների նշանակության և աշխատանքների ծավալից: Մագիստրալային և ինտենսիվ շարժման փողոցներում՝ 24, իսկ մյուսներում՝ 48 ժամվա ընթացքում:

1) Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս պետք է հաշվի առնել սույն կետի պահանջները:

77. Վերականգնված ճանապարհային ծածկույթներն ըստ պատկանելության հանձնվում են շահագործող կազմակերպություններին՝ կատարողական գծագրերի հետ միասին:

Այգեստանի համայնքապետարանի

աշխատակազմի քարտուղար՝ Լ.Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratygestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 37

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 28-1) կետի պահանջներով

Հաստատել Այգեստան համայնքի հողերի օգտագործման սխեմաները:

Կողմ - 8 Դեմ - Ձեռնպահ -

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՄՅԱՆ ՍՈՆՅԱ
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ
ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ
ՀԱՄԲԱՐՁՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

Համայնքի ղեկավար՝ **ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգեստան, 023560041, araratay gestan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 38

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածով

Հաստատել Այգեստան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ - 8 Դեմ - Ձեռնպահ -

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՄՅԱՆ ՍՈՆՅԱ
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԻԿ
ՀԱԿՈԲՅԱՆ ՅՈՒՐԻԿ
ՀԱՍՐԱԹՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՆՆԱ

Համայնքի ղեկավար՝ ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Այգեստան
համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 8-ի
N 38-Ա որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Այգեստան համայնքի ղեկավարին (այսուհետ՝ համայնքի ղեկավար) վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համայնքի ղեկավարը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով թվարկված և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով վերապահված կամավոր լիազորություններ:

3. Յուրաքանչյուր տարի կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարին կարող է նախատեսվել հատկացնել ֆինանսական միջոցներ, որը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 15%-ը:

4. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար պահանջվում է ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների դեպքերում:

5. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

6. Կամավոր լիազորությունների իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

7. Այն դեպքում, երբ կամավոր լիազորության իրականացումը նախաձեռնում է համայնքի ղեկավարը կամ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

8. Այն դեպքում, երբ կամավոր լիազորության իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները՝ նախաձեռնողը

համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը,

անհրաժեշտության հիմնավորումը և դրա պատճառը, անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9. Համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 8-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր լիազորության իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր լիազորության իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր լիազորության իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.

2) կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

10. Եթե կամավոր լիազորության իրականացման նախաձեռնողը սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և ավագանուն ուղղված դիմումը ներկայացնում է վերջինիս քննարկմանը:

11. Համայնքի ավագանին սույն կարգի 8-րդ կամ 10-րդ կետերում նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր լիազորության իրականացման դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցը քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր լիազորության իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

12. Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր լիազորության իրականացման լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր լիազորության իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13. Համայնքի ղեկավարը զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական

հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամները, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչները, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետները, ինչպես նաև համայնքի բնակիչները և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

14. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համայնքի ղեկավարին վերապահված այլ կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

15. Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները ավագանու կողմից քննարկվում են միայն մշտական գործող հանձնաժողովի կողմից կամավոր լիազորության իրականացման եզրակացության և անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության հիմնավորման առկայության դեպքում:

16. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է երեսուն հազար դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ, որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1,5-պատիկի չափը: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց:

17. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում գերազանց սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան 1 անգամ՝ տարեկան ուսման վարձի 30%-ի չափով:

Արգելվում է ուսման վարձի հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին, մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

Այգեստանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար Լ.Հարությունյան